ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 8-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:
Մարզպետն ընդունել է 34 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով մարզպետին դիմել էր քսանհինգ, աշխատանքի տեղավորման՝ յոթ, բնակարան ձեռք բերելու և խմելու ջրի կարգավորման հարցերով՝ մեկական քաղաքացի:
Դրամական օգնության դիմումներից քսաներեքին տրվել է դրական լուծում, երկուսը ուսումնասիրության ընթացքում են:
Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին դիմած քաղաքացիները:
Մարզպետը աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարեց ուսումնասիրել բնակարան ձեռք բերելու և խմելու ջրի կարգավորման վերաբերյալ դիմումները և ներկայացնել համապատասխան առաջարկություն:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ